

## ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ՝ ՆՎԻՐՎԱԾ ԽԱՋԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻՆ

Սեպտեմբերի 3-ին Ա. Սպենդիարովի անվան Լենինի շխտանակիր Օպերայի ու Բալետի պետական թատրոնի դահլիճում տեղի ունեցավ հայ մեծ լուսավորիչ հաշատուր Արովյանի մահվան հարյուրամյակին նվիրված սեպտեմբերական հորեյլական հանդիսավոր նիստ։

Հանդիսավոր նիստին մասնակցում էին հայ ժողովրդի մեծ տոներ ողջունելու համար Սովետական Միության տարրեր ուսպուրիկաներից Սրբան ժամանած ակադեմիկոս զրոգներ, այդ թվում ընկ. ընկ. Կ. Սիմոնով, Ն. Տիխոնով, Պ. Տիշինան, Շ. Գադիանին, Ի. Գրիշաշվիլին, Ս. Վուրդուն, Ֆ. Ռոբինսոն, Վ. Կիրպոտին, Վերք Հայաստանի» վեսյու ուսերեն թարգմանող Շերվինսկին և ուրիշները։

Հանդիսավոր նիստը բաց արեց Հայկական ՍՍՌ Միությանների Սովետի նախագահ, հորեյլական հանձնաժողովի նախագահ Ա. Գաբասյանը։

Բնութագրելուց հետո Խ. Արովյանի մատուցած ծառայությունները հայ նոր գրականության ու աշխարհարար լեզվի առաջաման դործում, ընկ. Կարասյանին ասաց։

— Հարյուր ասարի առաջ իր նշանավոր Վերք Հայաստանի» վեպում նա սրտի խորին կսկիծով ցանկանում էր իմանալ այն ուժը, որը փրկություն կրերի հայ ժողովրդին, նրան կվերածնի։ Նա չէր կարող այդ հարցին պատասխանել։ Այդ հարցին պատասխանում ենք մենք, նրա ժառանգորդները։ Գտնվեց այն ուժը, որը վերածնեց հայ ժողովրդին։ Դա Սովետական խիանությունն է։ Լենինի-Ստալինի մեծ պարտիան Հայաստանին տվեց ուժ և առաջգություն, նրան հասցրեց շտեմնված ծաղկման։

Խաշատուր Արովյանի կյանքի ու դործունեության մասին ընդարձակ զեկուցումով հանդես եկավ բանաստեղծ Նաիրի Զարյանը։

Զեկուցողը բնութագրելով Արովյանի կյանքի և ստեղծագործության հիմնական էտապները, ասաց։

— Սրովյանը հայ ժողովրդի ազգային ազատագրումը պատկերացնում էր ուս ժողովրդի հետ միավորված։ Արովյանը բացահայտեց հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշումը, ուս ժողովրդի հետ միավորվելու զաղափուրը, որը խոր կերպով արժատավորվել էր հայ ժողովրդի պատմության մեջ։

Զեկուցման վերջում ընկ. Զարյանն ասաց։

— Սովետական Հայաստանի ժողովուրդները սիրում և բարձր են գնահատում Խաշատուր Արովյանի ժառանգությունը, որովհետև հայ կուլտուրայի պատմության մեջ Արովյանը հանդիսանում է ղեմավարական հոսանքի ամենալուսավոր կերպարներից մեկը։ Ինչպես անցյալի ժառանգության մեջ եղած ամեն մի կենսունակն ու լուսավորը, այնպես էլ Արովյանը պատկանում է մեզ սովետական ժողովրդին։ Իրագործվել է մեծ լուսավորչի իղծը։ Հայ ժողովուրդը ստեղծել է իր ազատ և լուսավոր պետականությունը, սովետական եզրայրական ժողովուրդների անպարտելի ընտանիքում, ուս մեծ ժողովրդի գլխավորությամբ։

Զեկուցումից հետո ողջունի ճառով հանդես եկավ ՍՍՌ Սովետական Գրողների Միության ղեկավարայի ղեկավար Կ. Սիմոնովը։

— Այսօր, — ասաց ընկ. Սիմոնովը, — ոչ միայն շափազանց հանդիսավոր օր է, այլև շատ կարևոր օր և կարևոր օր ոչ միայն Հայաստանի, նրա կուլտուրայի, այլև մեր ամբողջ Սովետական Միության կուլտուրայի համար։

Խոսելով Սովետական խիանության տարիներին հայ ժողովրդի ձեռք բերած տնտեսական և կուլտուրական նվաճումների մասին, ընկ. Սիմոնովը շարունակեց։

— Հարյուր ասարի առաջ մեծած մեծ գրողը իրենից ներկայացնում էր իսկական ժողովրդասերի և ղեմավարի օրինակ, մի մարդու, որը ղեմավար և կրթությունը հավատում էր, որ հայ ժողովրդի ապագան գտնվում է ուս ժողովրդի հետ բարեկամության ու եզրայրության ուղու վրա։ Նա կրթությունը հավատում էր գրան և կրթությունը բարոզում էր այդ այն ծանր պայմաններում, երբ հեշտ չէր ուսական ինքնակալության պաշտոնական ղեմավար տակ տեսնել ուս ժողովրդի իսկական ղեմը, իսկական, մեծ երկրորդ Ռուսաստանը ղեկարրիստներ, Պուշկինի, Բելինսկու, Դերյյուկինի Ռուսաստանը։

Խաշատուր Արովյանը իր հայկական երկրի և իր հայ ժողովրդի կրթութ հայրենասերի էր, բայց նա նրանց հայրենասերի էր հենց այն բարձր իմաստով, ինչպիսի իմաստով ուս ժողովրդի հայրենասերներն էին Քիլինսկին և Զերնիշենկին։

«Խոսելով «Վերք Հայաստանի» վեպի մասին, ընկ. Սիմոնովը ասաց.

— Մարդկային մեծ կրթություն է ներդրված այդ հիանալի վեպի տողերում: Մեծ սիրտ էր բարախում այդ միայնակ մարդու կրթում, որը մենակ, մոմի լույսի տակ դիտելները դրում էր անմահ էջերու Շատ մեծ և շատ կրթոտ սիրտ, որովհետև ինչպես այլ կերպ բացատրել այն, որ 120 տարի հետո ես, մի բոլորովին այլ ժամանակի մարդ, որը խոսում է այլ լեզվով, ցանկանում եմ բռնել վեպի հերոս Աղասու ձեռքից, բռնել և թույլ չտալ, որ նա բարձրանա այն աշտարակը, որտեղ գտնվում էր իր մահը: Չէ որ այդ սլոպես է: Չէ որ չի կարելի առանց արցունքի կարգալ հայ գյուղացիների կրած հրեշավոր աղետների մասին պատմող այդ վեպի էջերու Չի կարելի առանց ատելության զգացումի կարգալ այն էջերու, որտեղ պատմվում է հայկական հողում թուրքերի ու պարսիկների կոտորած գազանությունների մասին: Չի կարելի առանց հրճանքի կարգալ այն էջերու, որտեղ պատմվում է թե ինչպես վերջիվերջո ամեն տեսակ տառապանքներից ազատագրվում է բաղմաշարժը Նրևանը:

Իր ելույթի վերջում ընկ. Սիմոնովն ասաց.

— Ես կարծում եմ, որ ապագայի վերաբերյալ իր ամենահամարձակ և ամենապայծառ իդեմում հաշատուր Արովյանը չէր կարող իր հայրենի երկրի համար ավելի լավ և ավելի պայծառ քախտ գտնել, քան մեծ Սովետական Միության 16 ուսպուրիկներից մեկը լինելու քախտը: Ես կարծում եմ, որ նա չէր գտնի այնպիսի խոսքեր, որոնք նրա երկրի զավակների համար ավելի հպարտ հնչեին, քան հետևյալ խոսքերը.

— Ես հայ եմ, Սովետական Միության քաղաքացի:

Այնուհետև ողջույնի խոսքով հանդես եկավ Սովետական Ռեկրահայի գրողների գեղեղացիների ղեկավար Պ. Տիշինան և ասաց.

— Ընկերներ, թույլ տվեք Սովետական Ռեկրահայի գրողների անունից Ձեզ հաղորդել բուլղարիկյան բոցավառ ողջույն: (Ընկ. Տիշինան այս խոսքերն, արտասանում է հայերեն լեզվով):

— Ինձ պատիվ է վիճակվել այսօր ներկա լինել սովետահայ կուլտուրայի արտասովոր այս տոնահանդեսին, հայ ժողովրդի մեծ զավակ հաշատուր Արովյանի մեծարման հանդեսին:

Ընկ. Տիշինան խոսելով այն մասին, որ միայն Հին-Ստալինյան ազգային քաղաքականությունը ժողովուրդներին տվեց անսահման

ծաղկման ու յարգավաճման հնարավորություն, հայ ժողովրդին հնարավորություն տվեց դառնալու Սովետական Միության 16 ուսպուրիկներից մեկը, ասում է.

— Համարձակությունը, սնվեհերությունը, անձնուրացությունը,— ահա թե ինչն է մեզ ապշեցնում Արովյանի քնավորության մեջ: Լինելով իր հայրենիքի բոցաշունչ հայրենասեր, որը իր ժողովրդի հետ առաջինը սկսեց խոսել հենց նրա պարզ ու հասկանալի լեզվով, Արովյանը ոչ միայն չվախեցավ բանալու Հայաստանի վերքերը, այլև ասաց, թե ինչպես պետք է բուժել այդ վերքերը, ինչ պետք է անի հայ ժողովուրդը: Ամենից առաջ պետք է լինի անխնա, լինի անդուր մեր թշնամիների նկատմամբ:

Ապա ընկեր Տիշինան հանդիսավոր նիստի նախագահությանն է մատուցում ուկրաինական ժողովրդի նվերը— հաշատուր Արովյանի երկրի ժողովածուն ուկրաիններեն լեզվով:

Վրաստանի գրողների կողմից ողջույնի խոսք է ասում ընկ. Շ. Դադիանին:

— Խաշատուր Արովյանը,— ասում է ընկ. Դադիանին,— պատկանում է այն պայծառ անձնավորությունների թվին, որոնք իր ժամանակին հանդիսացել են մարդկության լավագույն և առաջավոր զաղափարների կրողները: Առավել ևս մեզ՝ հայերի մերձավորագույն հարևան Վրաստանի ներկայացուցիչներն ահա մար այդ պանծալի տոներ: Դուրիչ է այն պատճառով, որ մենք հիանալի կերպով հասկանում ենք մեր ժողովուրդների պատմական քախտը, երբ դարերի խորքում մենք միասին ենք ընթանում և ստեղծում կուլտուրական արժեքներ:

Ապա հուլիսի 19-ը հիշեցնում է հայ և վրաց ժողովուրդների պատմական քախտի միասնությունը, խոր անցյալից սկսած այդ երկու ժողովուրդների սերտ կապն ու համագործակցությունը, 19-րդ դարի առաջավոր հայ և վրացի գրողների ու գործիչների մտերմությունը և ասում է.

— Արովյանի տոներ հանդիսանում է նաև ժողովուրդների բարեկամությունը ցեմենտող մի միջոց: Մեր խորին ողջույնը և հարգանքը Սովետական Հայաստանին, չնայած ողջույն Արովյանի հայրենակիցներին, հայկական նոր սոցիալիստական կուլտուրայի ստեղծողներին, սովետահայ գրողներին և հասարակական գործիչներին:

Աղբյուրանական ՍՍՌ գրողների կողմից ողջույնի ճառով հանդես է գալիս Ս. Վուրդունը:

— Հայ ժողովրդի բազմադարյան կուլտու-

րայի պատմութիւն միջ, — ասում է նա, — հաշատուր Արովյանը հատուկ տեղ է գրավում, որպէս հայկական դեմոկրատական նոր դրականութեան հիմնադիր։ Մեզ, աղբիւրների և մեր ամբողջ ժողովրդի համար Արովյանի անունը թանկ է նաև այն պատճառով, որ նա եղի է աղբիւրների և բնակչության դրականութեան .այր, դրամատուրգ և փիլիսոփա Միրզա Ֆաթի Ախունդովի ժամանակակիցն ու գրչակիցը։ Արովյանի, Ախունդովի և Միրզա Շաֆի րարեկամութիւնը, նրանց համատեղ ստեղծագործական ու հասարակական գործունեությունը նպաստեցին եղբայրական ազգային հրկու կուտուրաների զարգացմանը։

Ընկ. Ս. Վուրդունը գուգահեռներ է անցկացնում այդ սլայծառ գրողների ստեղծագործությունների մեջ և ջույց է տալիս, որ նույն զաղափարները հավասարապէս հուգել և ներանց։

Հատվիական ՍՍՌ գրողների կողմից ողջույնի խոսք է ասում ընկ. Ֆ. Ռորելիսը։ Նա իր ճառում ասում է.

— Սյուր մենք եղանք այն ցուցահանդեսում, որը նվիրված է Արովյանի կյանքին ու ստեղծագործությանը։ Պլակատներից մեկում ես կարդացի հետևյալ խոսքերը։

«Յոգնվի էն սհաթը, որ ողսի օրհնած ոտը հայոց լիս աշխարհը մտավ ու զղբաշի անիծած շար շունչը մեր երկրիցը հալածեց»։

Այդ ժամանակ ես մտածեցի, որ այդ խոսքերը ոչ միայն Արովյանի և հայ ժողովրդի խոսքերն են, այլև շատ այլ ժողովուրդների, որ դրանք իմ լատիշ ժողովրդի խոսքերն են։ Ավելի քան 700 տարի լատիշ ժողովուրդը գտնվել է գերմանական լծի տակ, իսկ գերմանական ֆաշիստական օկուպացիայի տարիներին նրան սպառնում էր նաև ֆիզիկական ոչնչացումը։ Նվ միայն շնորհիվ ողու մեծ ժողովրդի ապրում և ծաղկում է մեր ժողովուրդը։

Այնուհետև ողջույնի խոսք է ասում «Վերը Հայաստանի» վեպի թարգմանիչ Ս. Շերվինսկին։

— Ավելի քան երեսուն տարի է, — ասում է նա, — որ կապված եմ հայ դրականութեան հետ։ Յուրաքանչյուր անգամ, երբ անհրաժեշտ է եղել ձեռնարկել այս կամ այն հայերեն, երկի թարգմանությունը, ես ապրել եմ հսկայական գոհունակության զգացումներ։ Որպէս թարգմանիչ ես մեծապէս դոհունակություն եմ զգացել Արովյանի «Վերը Հայաստանի» նշանավոր վեպը և նրա բանաստեղծությունները։ Թարգմանելու ժամանակ Ավելի քան 100 տարի առաջ ստեղծված այդ վեպը իր բարձր գա-

ղափարների, կենսական րացառիկ ճշմարտության և խորին հուգականութեան պատճառով անկեղծորեն հուգում է յուրաքանչյուրին, ով այդ երկը իր ձեռքն է վերցնում, խորանում է հայ ժողովրդի ծանր անցյալի վշտալի էջերի մեջ։ Արովյանը վշտի երգիչ չէ, նա գայրույթի հսկայական ուժով հարձակվում է իր հայրենիքի թշնամիների վրա, կոչ անելով նրա լավագույն զավակներին սրբազան պայքարի գուրս դալ ազատութեան ու երջանկութեան համար։

Ընկեր Շերվինսկուց հետո իր բանաստեղծութեան ընթերցումով հանդես եկավ Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ, Հայկական ՍՍՌ Արվեստի վաստակավոր գործիչ, բանաստեղծ Գրիշաշվիլին։

Պատասխան խոսքով հանդես եկավ Հայաստանի Սովետական գրողների Միութեան նախագահ Ավետիս Իսահակյանը։

Ընկ. Իսահակյանը՝ վեր հանելով Արովյանի մատուցած ծառայությունները հայ դրականութեանը, խոսքն ուղղում է հյուրերին և ասում է.

— Բույլ տվեք ինձ Հայաստանի սովետական գրողների անունից, հայ ժողովրդի անունից հայտնել անկեղծ շնորհակալություն ձեզ, մեր թանկագին հյուրերին, եղբայրական գրականութեանների ներկայացուցիչներին, որ մեզ հետ միասին մասնակցեցիք մեր մեծ տոնին։ Շնորհակալություն մեր թանկագին հյուրերին, որ նրանք այնպիսի ուշադրութեամբ, այնպիսի րառառիկ ջիւղութեամբ վերարերվեցին մեր մեծ հաշատուր Արովյանի հոբելյանին։

Արովյանը պատկանում է մեր հայրենիքի բոլոր ժողովուրդներին, որոնք սերտորեն միաձուլված են մեծ եղբայրական րարեկամութեամբ։ Հենց այդ մեծ րարեկամությունը լավագույն դրավականն է մեր ժողովուրդների կուտուրայի հետագա էլ ավելի րուտն ծաղկման։

Հայկական ՍՍՌ Միեիստրների Սովետի նախագահի տեղակալ ընկ. Բ. Աստվածատրյանը հրապարակում է հաշատուր Արովյանի հիշատակը հավերժացնելու մուսին Հայաստանի կուտակարութեան որոշումը՝ հաշատուր Արովյանի անունով կոչել Նրեանի Հայկական Պետական Սանկուլարմական ինստիտուտը, էջմիածնի մանկավարժական ուսումնարանը, Նրեանում կանգնեցնել Արովյանի նոր հուշարձանը, սահմանել հաշատուր Արովյանի անվան ուսումնողական թոշակներ Նրեանի Պետական Համալսարանում, Նրեանի Պետական Հայկական Մանկավարժական ինստիտուտում, Նրեանի ուսական

Մանկավարժական ինստիտուտում, ինչպես նաև ասպիրանտական մեկ թոշակ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտում: 1948 — 49 թվերին ավարտել Արուսյանի երկերի ժողովածուի հրատարակությունը ութ հատորով:

Հանդիսավոր նիստը վերջում բոլորն ծափահարությունների տակ ընդունում է ողջույնի

հեռագիր ընդունված ժողովուրդների առաջնորդ Մեծ Ստալինին:

Ընդունվում է ողջույն նաև Հայաստանի քուլչեիկների ղեկավար ընկ. Գր. Հարությունյանի անունով:

Հայկական ՍՍՌ Պետական Հիմնի հնչյունների տակ հանդիսավոր նիստը փակվում է:

## ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ՝ ՆՎԻՐՎԱԾ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻՆ

Սեպտեմբերի 22—24-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի յոթերորդ գիտական սեսիան, եզրված հաշտուր Արուսյանի մահվան հարյուրամյակին:

Սեպտեմբերի 22-ի երեկոյան նիստում լսվեց Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ա. Ասատրյանի զեկուցումը «Արուսյանը մեծ լուսավորիչ-դեմոկրատ» թեմայով և Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու էդ. Թով-շյանի զեկուցումը «Եվերը Հայաստանի» վեպի իդեական բովանդակության մասին:

Սեպտեմբերի 23-ի ցերեկվա նիստում ֆի-

լոլոգիական գիտությունների թեկնածու Վ. Գաբրիելյանին զեկուցեց «Արուսյանը հայ-ուս-բարեկամության բառագույն թեմայով»:

«Արուսյանի տեղագրություն» ժանրերը: թեմայի շուրջը զեկուցեց Գ. Դեմիրճյանը:

Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ա. Ղանալանյանը զեկուցեց «Արուսյանը և ժողովրդական բանահյուսությունը» թեմայի մասին:

Սեսիայի վերջին նիստում, որը կայացավ սեպտեմբերի 24-ի երեկոյան, լսվեց Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու ընկ. Ղ. Այվազյանի զեկուցումը «Արուսյանը և ժողովուրդների բարեկամությունը»: